Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոց›› ՊՈԱԿ-ի ռուսերենով ուսուցմամբ դասարանների ռուսաց լեզվի և գրականության (16 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (16 դասաժամ), մաթեմատիկայի(6 դասաժամ, անգլերենի (8 դասաժամ), պատմության (6 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել ՝
-դիմում (ձև 1),

-մեկ լուսանկար 3 x 4 չափի,

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-‹‹ Հանրակրթության մասին ›› ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

- ՀՀ Կառավարության 2022թ. ապրիլի 28 №596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի % արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 17-ից մինչև հոկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00–ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **նոյեմբերի 1-ին՝ ժամը 13:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Վանաձորի №18 դպրոցում: Հասցեն՝ Լոռու մարզ, ք.Վանաձոր, Երևանյան խճ.151:

Տեղեկությունների համար զանգահարել (0322)3-78-09 հեռախոսահամարով: